ՆՈՐ-ԴԱՐ

№ 136 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ — Ուրբաթ 19 Օգոստոսի — 1888 — Ուրբաթ 19 Օգոստոսի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 136

Տարեկան 10 րուբլի, կէս տարին 6 րուբլի, երեք ամիսը 3 ր. 30 կ., ամիսը 1 ր. 50 կ., հատավ 5 կոպէկ։
Բաժանորդագրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція «Нор-Даръ»
կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Յայտարարութիւնք ընդունվում են ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։ Յայտարարութեան տողին 2 կ., ընդամենը համար կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր Դէսից-Դէնից։ Ուղևորութիւն (վերջ)։

Քաղաքական.—Քաղաքական լուրեր։

Խառն լուրեր։

«Նոր-Դար»-ի հեռագիրները։

Բանասիրական.—Մեր յոյսերը (շարուն.)։

Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Պարսկաստանից Էջմիածին վերադառնալով այժմ Թիֆլիսումն է գտնըվում Սալմաստի և Հնդկաստանի առաջնորդ՝ գեր. Գրիգորիս Սրբազանը։ Թելեթիս խմբագրին արած այցելութեան միջոցին իմացանք, որ սրբազան Գրիգորիսը Թէհրանում ուշացել է Նորին Մեծութիւն Պարսից Շահից վեհափառ կաթողիկոսի համար չքանշան ստանալու համար։

Նասրէդդին Շահը շնորհել է վեհափառ կաթողիկոսին իւր պատկերը, որի շրջանակը ադամանդներով քարերով է զարդարուած. Գրիգորիս Սրբազանի ասելով, յուսահեան վեհափառ Կաթողիկոսները այդ շքանշանն ստանում, որ առաջինն է համարւում.

Էջմիածնից և Երևանից ստացած տեղեկութիւններից իմանում ենք, որ Աշտարակ գիւղում վախճանւել է ս. Սինոդի պրոկուրոր Նիկողայոս Տէր Յովսէփեանը։ Հանգուցեալ պրոկուրոր Վախտանգեանից յետոյ Նիկողայոս Տէր Յովսէփեանը 10 տարի շարունակ վարում էր պրոկուրորի պաշտօնը, պէտք է ասած, ուշադրութեան արժանի եռանդով. թէպէտև վերջին տարիներում հանգուցեալը մարմնական ծանր հիւանդութեան էր ենթարկուած (բայց այդ հանգամանքը նրան չէր արգելում չափազանց գործօն լինելու։

Մեզ երէկ լուր հաղորդում են, որ Թեմիս ս. Առաջնորդը մի կոնդակ է ստացել Ներսիսեան դպրանոցին վերաբերեալ։

Կովկասի հայոց մէջ հայոց թատրոնի հիմնադիրներից և բեմական գործը առաջ տանողներից մէկը՝ մեր ընթերցողներին յայտնի Գէորգ Չմշկեանը շատ ծանր հիւանդ պառկած է Կօջօր ամարանոցում։

Հիւանդի ընտանիքը յուսահատ դրութեան մէջ է, բայց բարեբաղդաբար, ինչպէս մեզ հաղորդում են, հիւանդի բժիշկը յոյս ունի, որ կ՚առողջանայ։

Ինչպէս իմանում ենք, Ներսիսեան դպրանոցի հոգաբարձական վերջին նիստում որոշել են արձակել Նախկին ուսուցիչներին, բացի մի երկուսից։ Իսկ տեսչի պաշտօնը մնացել է դեռ չլուծուած։

Որքան մեզ յայտնի է, Էջմիածնից արդէն Ներսիսեան դպրանոցի համար տեսուչը նշանակուած է.

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ.—Քաղաքիս հայ ազգաբնակութիւնն աճելով, այժըմ կարիք է զգացվում երկու նոր եկեղեցի շինելու։ Խորհուրդ կը տայինք այդ եկեղեցիները շինել մինը «Փանահէր» ասուած մասում, իսկ միւսը՝ Նախկին գերեզմանոցում, գոնէ վերջինս անհրաժեշտ է, որովհետև այդ տեղն ինքն ըստ ինքեան շատ յարմարաւոր և Թանկագին տեղ է, և, ինչպէս յայտնի է, շատերը օգտվում են եկեղեցապատկան տեղերը իւրացնելով։

—Չնայելով, որ քաղաքացիները գանգատվում են գործ չլինելուց, բայց ամեն գիշեր լցվում են «Ֆիւրերի» ցիրկը՝ անբարոյական ներկայացումներին ներկայ լինելու։

Արդէն ամիս ու կէս է, որ յիշեալ ձեռնածուն քամում է քաղաքացիների փողերը և մտադիր է Ղարսից վերադառնալիս չորս ամիս էլ մնալ։ Լաւ կը լինէր, որ այդպիսի բաների վրայ մի փոքր աւելի ուշադրութիւն դարձնէին։

* * *

Ռուսաց գրողներից մէկն է Պէտրօվսկին (ոչ կեղծանուն, այլ փախստական) «Московскія Вѣдомости» Թերթի մէջ հրատարակում է Կովկասում իւր ստացած տպաւորութիւնները «По Закавказской границѣ» վերնագրով։ Նա իւր չորրորդ յօդուածի մէջ խօսում է Թիֆլիսի մասին և խոստովանում է, որ կարճ ժամանակ մնացած լինելով այստեղ, չէ կարող մի որոշ բան ասել նրա մասին, բայց պարոնը դատախազի պաշտօն է ստացել ամբողջ Կովկասի ազգութիւնների վերաբերմամբ։ Նա օրինակ, մեղադրում է հայերին, որ իբրև թէ նրանք զբաղուած են «Մանուկ Հայաստան»-ի մտքով, իսկ վրացիներին, որ նրանք զբաղուած են «Մանուկ Վրաստանի» խնդրով։ Պարոնը չէ բաւականացել այսքանով. Նա գտել է, որ Կովկասում կան նաև «Մանուկ Մինգրէլիա», «Մանուկ Իմէրեթիա», «Մանուկ Գուրիա» և այն, և այլն բազմաթիւ մանուկներ։ Մի խօսքով ամբողջ Կովկասը պարոնի աչքում երևացել է յեղափոխութեան մի բոյն. Նա մինչև անգամ գտել է պանական կուսակցութիւններ՝ որոնք գոյութիւն կարող են ունենալ միայն առանձին պետութիւն կազմող ազգերի մէջ. Նա գտել է «անհաշտներ», «չափաւորներ», «սահմանադրականներ», «ազգայնականներ», «Թշնամականներ» (սեպարատիստ) և այլն.

Զարմանալի չէ, որ կան անհատներ՝ որոնք առանց Դոն-Կիշօտի ազնուութիւն ունենալու կռվում են հողմաղացների դէմ, բայց ցաւալի է, որ դրանք լրագիրների մէջ տեղ ունին և նրանց զառանցանքները հրատարակվում են։

ԳԵՕԿՉԱՅԻՑ.—Այս տարի մեզանում ջերմ ու տենդը աւելի յաճախ է պատահում՝ քան ուրիշ տարիներ։ Այդ բացատրվում է նրանով, որ նախ տոթերը խիստ սաստիկ են և երկրորդ՝ չկայ դեղատուն, որտեղից կարելի լինէր դարման ստանալ։ Թէև այստեղ կայ մի բուժարան, բայց նա էլ մեծ յոյն դժուարին հիւանդներին է դեղեր տալիս, մինչդեռ միւսները զրկուած են այդ օգնութիւնից, այնպէս որ շատերը ստիպուած են դիմելու Բաքուի դեղատներին, ինչպէս օրինակ, [illegible] օրեր առնել ծառայողներ, որոնք ուղարկելով դեղը [illegible] պատում են, որ Բաքուից գան իրենց համար ամենահասարակ դեղեր։ Ունէինք մի դեղատուն, բայց այն էլ տեղափոխուեցաւ։

—Վաճառականութիւնը համարեա Թէ ընկած դրութեան մէջ է գտնվում. Բայց ցորենի գինը քանի գնում բարձրանում է. երեք ամիս սրանից առաջ պուդը ծախվում էր 90 կոպէկով, այժմ ծախվում է 98 կոպ.։ Իսկ տեղացի վաճառականները հեռացել են, մնում են տեղացիները, որոնք մօտ ըսնելով [illegible] ջերմ ու տենդի դէմ կռուելու համար. Նրանք, պէտք է խոստովանել, իրենց [illegible] բաժին են հանում [illegible]։

—Մօտակայ Գիրք գիւղում մի երիտասարդ օձից խայթուելով, մեռնում է խայթուածից կէս ժամ յետոյ։

Միխայլօվօ կայարանից գրում են «Кав.»-ին, որ այնտեղ այժմ խօսակցութեան առարկան Սուրամի անցքով կեռօսինի խողովակ շինելու ծրագիրն է։ Կեռօսինի անցքը շինելու են երկու Նոբէլ եղբայրները ընկերութեամբ՝ Միխայլօվօ կայարանից մինչև Կվիրիլի։ Բայց այդ յիշեալ կայարանների մէջ տեղ [illegible] երկաթեայ 75 սաժէնանոց կերօսինանցքը, ինչպէս կարծվում է, կը շինուի կը վերջանայ նոյեմբերին կամ դեկտեմբերին։

ԴԵՐԲԷՆԴԻՑ.—Աչքա քանի օր է, որ քամիներ են փչում և ծովը ալեկոծուած է։ Շոգենաւերը ափին չեն մօտենում։

—Մթերքները աժան են. այսպէս օրինակ՝ ոչխարի միսը 7 կ., տաւարի միսը 6 կ., հացը 1 ֆ. 6 կ., 2 ֆ. 3 կոպէկ, [illegible] 30 կ., հաւը 15 կ., 6 ձուն 5 կոպ., խաղողի ֆունտը 1½ կ., ձմերուկը և սեխը պուտը 30 կ.։

[illegible] Օգոստոսի 15-ին, Թիֆլիսի երկաթուղային կայարանում շոգեմեքենայի տակ ընկնելով սպանվում է Ճանապարհի պահապաններից մինը։ ՑԺԺԺՐ—ՑԺՍԺՐ

ՕԶՈՒՆԻՑ.—Երկարատև անձրևներից յետոյ այլ ևս անձրևներ չեն գալիս։ Թէպէտ առողջութեան վնասակար է դա, բայց բարեխառն կլիմայի և Թարմ օդի շնորհիւ դեռ ևս ազատ ենք պատահական ցաւերից։ Բուսականութիւնն ընդհանրապէս լաւ է, հացը, ինչպէս նկատվում է ցորենի կապած խուրձերից, կարելի է նմանապէս բաւարար համարել. Թէպէտ մասնաւորապէս տեղ-տեղ երևեցաւ Օձնում, աւելի շատ հիւսիսային կողմը՝ Եղնախստ կոչուած տեղը, փոքրիկ միջատներ՝ «սև բզեզ», որոնց տեղացիները անուանում են «սև գուլալ», որ վնասում է հենց նոյն իսկ ցորենի հասկի ծաղկեալ միջոցին, և այդ ժամանակուանից վնասուած հասկերը մնում է դատարկ առանց ցորենի։ Բայց երբ ցորենը ամրանում է, այլ ևս չէ կարողանում «գուլալը» մեծ վնաս հասցնել։

Թուղթերն միջակ է։

Հունձը վերջացել է։

Օգոստոսի 14-ի գիշերը քաղաքումս Կօշօրի կողմից երևաց աչքերին հըրդեհի բոց, որ շատերին կարծել էր տալիս, թէ Կօշօրն է այրւում։ Այժմ, [illegible]

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ.—[illegible]

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ՅՈՅՍԵՐԸ *)

Գ

Նոր-թլած ուսանողը, երկու հարբ դեղին սպառում կռճակներով զարդարած նշանազգեստը հագած, կանգնած էր հայելու առաջ և զուարճանում էր ինքն իւր անձով. Նրա ուրախութեանը սահման չկար։ Երբեմն ինքն իրեն ժպտում էր, երբեմն լուրջ դէմք ընդունելով՝ հպարտ հպարտ քայլում էր ընդարձակ դահլիճում, իսկ երբեմն էլ կանգ առնում և քաջ զինուորի նման կուրծքը դուրս ձգում և շփելով ոտները փայլուն յատակին զանազան դիրք էր բռնում։ Բոլորոնած ուսանողը հիացած նայում էր եղբօր վրայ։

—Վանեչկա, փեշաւէս ես էլ արժանացայ «ուսանողի» անունը կրելու։ Դրա համար ինչքան չարչարանք, ինչքան տանջանք եմ կրել, քանի անքուն գիշերներ անցրել... Բայց ոչինչ, իմ կարծիքով սրանից յետոյ գոնէ կիսով աւելի ազատ, աւելի Խելացի կեանք... Այնպէս չէ՞։

—Ի հարկէ, ի հարկէ։ Մի՞թէ կարելի է համեմատել ուսանողական կեանքը աշակերտական կեանքի հետ։ Միշելիս, մի մոռանար, որ այժմս դու առաջուայ գիմնազիստ Միխայիլը չես, այլ համալսարանական ազատ և հաւասար անդամը։

Այստեղ համալսարանական հաւասար, ազատ անդամն նորից կանգնեց հայելու առաջ և սկսեց այնպէս նայել իւր ձեռներին, որ ասես կամենում լինէր նրան հարցնել. «արդեօք նման եմ ուսանողի... այո... դէմքս լուրջ մարդու դէմք է»։ Սրանից յետոյ նա պատից եկաւ յանկարծ մէկ ոտի վրայ, գրկեց աթոռը և երեւակայելով իրեն պարընկեր տիկնոջ հետ, սկսեց «վալս» պարել։

—Bravo, bravissimo, բացականչեց հին ուսանողը, որի լատիներէն լեզուի գիտութիւնը միայն այդ մէկ բառի մէջ էր պարունակվում։ —

—Գիտե՞ս ինչ, Վանեչկա, եթէ ուսերիս զարդած լինէր էպոլէտներ և ձախ կողմից կախած մի որ և իցէ նշան, այն ժամանակ ուղիղ որ chique կը լինէր։ Առանց նրանց այս զգեստի մէջ կարծես Թևերը կտրած Թռչուն լինեմ։

—Ուզում ես, որ Խ-ովի բոլոր օրիորդները քեզ վրայ սիրահարուեն։ Այդ հագուստով դու կատարեալ տղամարդ ես։

—Ուղիղ է, Վանեչկա ջան, որ ասում են, Թէ այնտեղ բոլոր օրիորդները շէկ են և սև աչքեր շատ են սիրում։

—Այո, սև աչքերը տեսնելիս նրանց ուշքն ու միտքը գնում է։ Գիտես նրանք մեզ ինչպէս են անուանում. «черные жуки» (սև բզէզներ)։ Լաւ անուն չէ։

—Վանեչկա, երևի դու այնտեղ սիրուհի ունիս, մի Թագցնիլ ինձանից։

—Թագցնելու ինչ ունիմ, եղբայր, Դու խօ գիմնազիստը չես, այժմս դու հաւասար իրաւունքով քաղաքացի ես։ Ի հարկէ, ունիմ և մէկի տեղ երեք հատ։ Այն ուսանողը ինչ ուսանող է, որ սիրուհի չունի։

Не любить—погубить
Значить жизнь младую,
Въ жизни рай выбирай
Себѣ дѣву молодую.

Երգեց բորբոքուած ուսանողը։

Проведемте друзья
Эту ночь веселѣй,
Пусть студентовъ семья
Соберется тѣснѣй.

Վերջացրեց նոր-թլած ուսանողը և նորից սկսեց աթոռի հետ պարել։

Բայց ես էլ էպոլէտների մասին եմ մտածում, Անպատճառ գոնէ ժամանակով էպոլէտներ պէտք Ճարեմ և զինւորի համար մի որ և իցէ նշան։ [illegible] խանութում [illegible] կը տան չէ՞։

—Հարկաւոր չէ, Միխայլ, ընկերները քեզ կը ծաղրեն, նկատեց հին ուսանողը։

—Շատ հարկաւոր են ինձ ընկերները։ Լաւ նայեր Թէ նրանք ինչ բաներ են անում։ Ով որ հարցնէ, Թէ դա ինչ նշան է, ես կը հնարեմ մի Ճեմարան և ինձ կանուանեմ այն Ճեմարանի ուսանող։ Ինչ վնաս։

[illegible]

---

*) Տես «Նոր-Դար» № 134.

գըսեանը շատ եռանդով է աշխատում։ Արձանագրութիւններից ինչպէս երեւում է, մեր եկեղեցիների կորուստը հասնում է մի քանի տասնեակ հազարների… Ցաւալի է, ի հարկէ, որ Ս. Էջմիածինն ուշ, շատ ուշ ուղարկեց քննիչ. բայց լաւ է ուշ—քան երբէք։

—

Թիֆլիսի պ. քաղաքագլխի կարգադրութեամբ Բերլինի առեւտրական տներից մինին պատուէր է տրուած մի քանի Ֆօնտաններ պատրաստելու, որոնք պիտի շինուին Մուշտայիդում և քաղաքային սկվէրներում։

—

Այսօրերս հրատարակուել է «Թիֆլիսի քաղաքային խորհրդի 1887 Թ. հաշիւը», որ բաւական մանրամասն հաշիւ է խորհրդի գործունէութեան։ Գիրքը տպուած է սահմանափակ թուով։

ԴԷՍԻՑ—ԴԷՆԻՑ

—

Կան աշխարհքումս մարդիկ, որոնց ընդունակութիւններն չափազանց սահմանափակ լինելով հանդերձ, մեծ համարում ունին իրենց վրայ։ Այդ կարգի մարդկանց համար ամէն միջոց սուրբ է իրենց անունն հասարակութեան յայտնի կացուցանելու, իրենց վրայ խօսեցնելու,—լաւ կամ վատ, այդ միեւնոյն է նրանց համար,—գէթ մի առ վայրկեան իրենց վրայ դարձնելու համար հասարակութեան ուշադրութիւնը։

Սակայն դա մի ցաւ չէ. ով ինչ ուզում է ասէ, խօսէ. ներկայ դարումս թուղթը շատ համբերող է դարձել. Նրա համար միեւնոյն է, թէ անմեղ արեան մէջ թաթխուած ոճրագործի ձեռքն է խազում գրերը՝ թէ առաքինութեան մարտիրոսի դողդոջուն մատները… Բայց ցաւալին այն է, որ կան մարդիկ, և դրանց թիւը քիչ չէ, որոնք կարդում են այդ ամենը և… քաջալերում են նրանց։

Յիշածս մարդկանց թիւը պակաս չէ մեզանում. պակաս չէ և ուրիշ ազգերի մէջ՝ որքան էլ դրանք առաջացած լինին, որովհետև ամէն տեղ էլ կան մի կարգ մարդիկ, որոնք կարօտ են զօրեղ զգացմունքների, կարօտ են գլխապտտաբար խաբուելու։ Ահա այդ բանից օգտվում են մարդիկ, որոնք զուրկ լինելով ինքնուրոյնաբար մտածելուց, կեանքի բազմազան երեւոյթներն դիտելու և նրանց որոշ համակարգութեան տակ ձգելու ընդունակութիւնից, հասարակութեան մատուցանում են որոշեալ ստուլթիւնների խորտիկներ՝ զանազան «սօուսներով» կրկնած։

*

Վս. Կրէստովսկին (ոչ կեղծանուն, այլ իսկականը)։ Նա եկել է Կովկաս. մնացել է մի քանի օր միայն և իւր ճանապարհորդական տպաւորութիւնները հրատարակում է «Москов. Вѣд.»-ի մէջ «По Закавказской границѣ» վերնագրով։ Նա իւր չորրորդ յօդուածը նուիրելով Թիֆլիսին, ասում է. «իսկ ինչ վերաբերում է իսկական քաղաքի կեանքին, ես շատ քիչ մնացի այստեղ, ուստի իրաւունք էլ չունիմ նրա մասին ո և է եզրակացութիւն անելու»։

Շատ լաւ. շատ գեղեցիկ։ Մենք ոչինչ չէինք ունենալ նկատելու այդ մասին, եթէ պարոնը բաւականանալով այդքանով, մի քանի հարևանցի նկատողութիւններ անէր ժողովրդի մասին։ Բայց արի բանը տես, որ քաղաքի մասին իրեն իրաւունք չհամարելով ո և է եզրակացութիւն անելը, թոյլ է տալիս իրեն դատախազի դեր ստանձնել ամբողջ երկրի տրամադրութեան վերաբերմամբ.

«Նոր ձեւի ինտելլիգենցիան, ասում է նա, նրանք ոչ թէ չեն ճանաչում, այլ հսկում են արթուն, մանաւանդ հայերը, որոնք աւելի աչքաբաց են և կազմել են (ունին) «Մանուկ Հայաստան» (անուանով ընկերութիւն)։ Սակայն Հայաստանը չէ միայն, կայ և Մանուկ Վրաստան, Մանուկ Իմէրէթիա, և Մանուկ Մինգրէլիա. առ այժմ չկայ դեռ Մանուկ Սվանէթիա, և նոյնպէս Աբխազիա. սակայն չպէտք է յուսահատուել,—մեր առանձին ջանքերով, ժամանակով դրանք էլ կը ծնուեն։ Լեհացի և հրէայ պաշտօնեաների քաղաքակրթիչ տարրերը, որոնց թիւն այստեղ խիստ առատ է, բաւական օժանդակող են դրա համար, ուստի ոչ միայն Սվանէթիա և Աբխազիա, այլ և կարելի է յուսալ, որ ժամանակով կը լինի և Մանուկ Շապսուղիա, Աբաձէխիա, Բժէդուխիա, Ուբըխիա և այլն և այլն»։

Միայն ծաղր չէ այս պարոն յօդուածագրի կողմից. նա կարծես հաւատում է իւր ասածին և ուզում է հաւատացնել և ընթերցողին. Նա շարունակում է.

«Նրանք (ինտելլիգենտները) ունին իրենց «սահմանադրականները», «Թըշնամարկիչները» (սեպարատիստ), «ազգայնականները», իրենց «չափաւորները» և իրենց «անհաշտները», բայց դրանք իսկապէս այդ անունների ծաղրածուներն են, և այն՝ ասիական ծաղրածուներ, թէև իրենց խիստ խոհուն են կարծում. «Անհաշտ»-ների իղձն է «անպայման անջատումն ռուսական բարբարոսութիւնից», ռուսների արտաքսումը և «Հայաստանի համար անկախ ռամկավարական հասարակապետութիւնը»։ «Չափաւորների» իղձն աւելի համեստ է»։ Եւ այլն և այլն։

Պարոն յօդուածագիրն իւր ասածները աւելի հաստատելու նպատակով է երեւի, որ առաջ է բերում տեղացիների ռուսերէն խօսելու նմուշներ….

Ի հարկէ, ներելի է մասնաւոր անձերին, որոնք ո և է գնով իրենց վրայ դարձնել են ցանկանում հասարակութեան ուշադրութիւնը, զառանցել, բայց ներելի չէ մի թերթի համար այդքան հեշտ կերպով մեղադրել մի քանի ազգութիւններ։

⁂

«Մաղէր»-ի գարեջրատունը կամաց-կամաց դատարկվում է իւր ինտելլիգենտ հիւրերի մի մասից. Հայ ուսուցիչներն այլ եւս յաճախ չեն երեւում այնտեղ։ Այդ առաջանում է նրանից, որ ոմանք արդէն հեռացել են իրենց պաշտօնատեղերը՝ գաւառ, իսկ ոմանք էլ մի աւելորդ բռնից—դրամից թեթեւացած, աւելի լաւ են համարում իրենց սենեակներում նստել և սպասել, թէ որտեղից պէտք է հրաւէր ստանան։ Ինչպէս 1883/84 թուերին «Եւրոպա»-ի գարեջրատունն էր դարձել Թիֆլիսի հայ ինտելլիգենտ դասակարգի ժողովատեղին, այնպէս էլ այժմ «Մաղէրն» էր դարձել… Ո՛վ գիտէ ինչեր կը լսէինք, որքան կը լուսաբանուէր մեր ուսումնարանական գործը, եթէ մի օր լեզու ստանային գարեջրի բաժակները կամ սեղանները։ Բայց նրանք լուռ են՝ ինչպէս և լուռ են հայ ուսուցիչները «Մաղէր»ից դուրս։ Կանցնի մի ամիս էլ, «Մաղէր»ը վերջնապէս բոլորովին կը դատարկուի իւր հայ-ուսուցիչ հիւրերից, բայց որոնց մտքերում կը մնայ անմոռաց ոչ թէ իւր լաւ գարեջրի պատճառով, ո՛չ. Հայ ուսուցիչն առանց այն էլ շատ քիչ է խմում գարեջուր, այլ այն խնդիրների պատճառով, որոնք յարուցուել են այնտեղ… Փառք Աստուծոյ, Հայ ուսուցիչը արբեցող չէ, անբարոյական էլ չէ. եթէ նա հաւաքվում էր «Մաղէր»ի մօտ, այդ էլ նա անում էր երեկոյեան հով ժամերին ընկերների հետ նստելու, մի բաժակ գարեջուրը առաջին՝ իւր դրութեան, խարդաւանքների, ամբողջ տարուայ կեանքի մասին ասել-պատմելու, խորհրդակցելու համար…. Սակայն ինչ եզրակացութեան եկան, ինչ մի նոր բան լսեցին կամ սովորեցան, ինչ մտքի թարմացուցիչ տպաւորութիւն ստացան… կարելի է համարձակ ասել, որ ոչինչ։ Ամէն տեղ էլ նոյն անվերջ կռիւները հոգաբարձուների և ուսուցիչների մէջ… ինչ որ սրանից 10—20—30 տարի առաջ։ Առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու կարելի է համարձակ պնդել, որ «Նոր-Դար»-ի յարուցած խնդիրը մեր ուսումնարաններում վարչական դրութիւնը բարւոքելու կարիքի մասին, բոլորովին ի դէպ է եղել և յոյժ կարեւոր…. Դրան ապացոյց է և ուսուցիչների ներկայ դրութիւնը։

*

Մեր ուսումնարանների փակուելուց յետոյ մի տարի է միայն, որ բացուեցան ուսումնարանները։ Սակայն ուսումնարանական տարին վերջացաւ և աչա, ով որ ուշի ուշով հետևել է ուսուցիչների և հոգաբարձուների ցանկութեան, անշուշտ տեսած կը լինի, որ նրանք փոխադարձաբար դժգոհ լինելով միմեանցից, առաջինները գաղտագողի աշխատում էին նոր տեղեր գտնել, իսկ վերջինները՝ նոր ուսուցիչներ վարձել։ Չկար մի տեղ, որ այդ խնդիրները յարուցուած չլինէին, և եթէ ուսուցիչների մեծ մասը մնացին կրկին իրենց տեղերում, այդ էլ պէտք է բացատրել նրանով, որ կամ հոգաբարձուների մէջ համերաշխութիւն չէ եղել, կամ թեմական առաջնորդը դէմ է եղել նրանց ցանկութեան և կամ իրենց ցանկացած պայմաններով նոր ուսուցիչներ չեն գտել, իսկ ուսուցիչներն էլ յարմարաւոր տեղ չգտնելով, անպաշտօն չմնալու համար, գնացել են իրենց տեղերը….

Սակայն դեռ բաւական ուսումնարաններ կան, որոնք ուսուցիչ չունեն և բաւական էլ ուսուցիչներ՝ որոնք տեղ չունեն։ Ահա արդէն շուտով կը սկսուի ուսումնարանական տարին, բայց շատ բան դեռ անորոշ է մնում… Կան ուսումնարաններ, որոնք հանգամանքից օգտուել են ցանկանում՝ առաջարկելով անհամեմատ քիչ ռոճիկ… ինչու։

Իսկ եթէ «Նոր-Դար»-ի առաջարկած միջոցները գործադրուէին մեր ուսումնարանական գործի վարչական կազմի վերաբերմամբ, արդեօք հնարաւոր կը լինէին այդպիսի տգեղ երեւոյթներ։

Q.

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ *)

Շիրակ գաւառից—մինչև Արշարունիք

Թ.

Կաղզուանի անցեալը.—Նախկին Երասխաձոր.—Նրա հիմնուելը.—Հագարացիները Կաղզուանում.—Ցոյները.—Թիւրքերը.—Ռուսները 1854 և 1877 թուականներում.

(Վերջ)

Հին Արշարունեաց գաւառի մէջ, որ սահմանակից է Շիրակ և Վանանդ գաւառներին, կայ Երասխաձոր աւանը, որ շատ վաղուց յայտնի է մեր պատմութեան մէջ։

Թէ ինչի՞ այս երկիրը կոչուեցաւ Արշարունիք, այդ մասին պատմութիւնը մեզ վկայում է հետևեալը. «Արքայն Տրդատ սիրարար պարգեւեաց զայն (Երասխաձորը) Կամսարայ որդւոյ Պերոզամատի կարենեան—Պահլաւի որպէս ազգականի և մտերիմ հարազատի, յորժամ ընկալաւ զնա մկրտութիւն ի ձեռն սրբոյ Լուսաւորչի, և ի մեռանելն նորա յետ [illegible] ժամանակի ժառանգեաց զերկիրն հանդերձ հարաւային սահմանօքն Երասխաձորաւ, որդւոյ նորա Երկրորդ Արշաւիրի, յորմէ և կոչեցաւ [illegible] այն Արշարունիք» **)

Այս խօսքերից պարզ երեւում է, որ Տրդատ ամբողջ գաւառը նուիրեց իւր «մտերիմ ազգականին» Կոմս Կամսարականին, որ ընդունեց Պահլաւի անդրանիկ որդի Արշաւիր Կամսարականն և իւր անունով ձորն էլ կոչուեցաւ Արշարունիք։

Արշարունեաց երկրի մէջ իւր պատմական անունով և քաղցր ջրերով յայտնի է Երասխաձոր աւանը, որ Կաղզուան է կոչւում. Թէ ինչի՞ Երասխաձորը Կաղզուան կոչուեցաւ,—այդ մասին ոչինչ յայտնի չէ մեր պատմութեան մէջ։ Յայտնի է միայն, որ Արշարունեաց գաւառի մէջ կայ «Երասխաձոր գաւառ աշխարհին Արշարունեաց կամ Անձրեւիք ուր այժմ կոչեն ոմանք Սահաթ, և զմասն ինչ սորա Սահաթմանօս ***) եւ դարձեալ—«Կաղզուան քաղաքն ի գաբեղինայս, և զի գաւառն այն գաբեղինք առ սահմանօքն Երասխաձորոյ հաստատութեամբ Հայոց ի բազում ցեղից սակս թէ Կաղզուան լցէ Երասխաձոր, և այլք ուրեք Արշա-

---

*) Տես «Նոր-Դար» № 132.

**) Մովսէս Խորենացի գիրք Բ., գլ. Գ. Եւ Գ. գլ. Գ.

***) Չամչեան, Պատմութիւն Հայոց գիրք Գ. երես 148.

բած ես ջանդրած… մէ հեդ ու առաջ բոլթա տուէ… պոլկովնիկ ես, պոլկովնիկ… քու ջանը սանիմ, վուրթի ջան… գլխովդ պտուտ գամ, աչքիս լուս… քեզ վուր քաննց տեսայ, հիմի թէգուզ մեռնիմ, քու ձեռք հոգին արժանի ըւիմ, էլ ինչ դարդ ունիմ… Արաւ, ա մարդ, խա քեզ չէի ասում, թէ մեր Միխակը վուր կարդալից պտուղ է, ուրիշ պտուղ… ուսումը վերջացրեց ու մէրաւ՝ մեծութիւնն էլ հիւը ստացաւ։

—Մեծութիւն ստացաւ, վունց չէ։ Մէ քանի հարուր թուման դրա համար չէր հարգէ, վուր ուսումը վերջանէ ու մեծութիւնը ստանայ։

—Էհ, օնչ ես խոսում, քանի թէ ուսումը չէ վերջացրել, բաս էս ափիցերի շորերը մէր է հաքի, Վանիչկէն էլ գիմնավլէն պրծաւ, բաս նա ինչի չը հասաւ։

—Վոհ, ամենքը խօ մէ չիլօւմը չեն սովրում, հէր օխնած, Վանօն զօլոտարութին է սովրում, հայրաթս էլ մէ ուրիշ բան կու սովրէ էլի… Михакъ, а нука, քալօ, скажи, что твой на Москову будетъ учиться.

—Ուհ, նենածու էլ ինչ պիտի սովրին. Դրանց մաքիէր եմ սիրտս մաշուեցաւ կի ու Քեան քանուհինգ տարի հարաքաթները կտրած մէ գլուխ սովրում են, սովրում են, ախըր ինչով չպրծան էս անդէր-մունդրէկ սովրելը։ Հէրիք չէ։ Գանա բէի բան է մնացի կարդալու։

Ահա ձուր է կորճի, թէ Վանիչկէս իմ պէտկէ զօլոտարութինը պրծնէ, վուր էրէխես մէ փռսիլիմ, տուն ու տեղ, քունջ ու պուճախս սարքիմ։ Էն օրը Սհաթթսազենց Սալոմէն էկիլ է ու մէ ինչ է գովում, ինչ է գովում, քա ջան, Վանիչկես։ Մէ խօսքով մինչըր երգինքն է բարձրացնում։ «աչքիս լուս, Նատալիա ջան, լաւ տղայ ունիս, կօսէ, ամենքի աչքը քեզ երանի կուտան, կօսէ, Վանիչկէս, խօ ու իմ Սուլիզոնը, էննց սիրում իմ, քանց որ իմ մէկ ու ճար Սօնիչկին, կօսէ։ Իժում, քաջան, սիրտս խրա աչքան դալի։ լաւ մէղնի ուսում իմ տալ, կօսէ։ Սօնիչկիս չիմ ուզում անուսում մարդուն տալ, կօսէ։ Քու Վանիչկի նման տղա, վուր ուսում ունի, վունցէլ չիմ խնայի, էրկու հարուր թումնի քաշինք, էրեք հարուր թուման փուղ կուտամ, կօսէ։

—Օ՜հօ, ա կնիկ, էտ լաւ խերով բան է, ձեռիցդ չթռցնիս։

—Մեթոմ սուտ ես ասում այ քաջան. փիքըր իմ անում, էս ամառ էլ էտ ննիմ, վուր ով գիդէ, ջհէլ տղայ է, մէկ էլ տեսար մէ անփոխան մաթուշկուն պօդրուչիկի արաւ ու գլխեր բերից։ Ինչ հաջադ, հիմի, դուն էս իմ պարունը, կու ննինք ու մէկ տարուց էդնեն, երփօր զօլոտարութինը պրծնէ ու գլխեր գայ, կու փսակինք։

Լաւ չէմ ասում, ա մարդ ջան։

—Էհ, ա կնիկ, ինչ ենք վրազում. թող մէ զօլոտարութինը քութաւ անէ, կու տեսնիս, վուր երեք հազար թուման կի չէ, տաս հազար թուման էլ կուտան, ջէր հալա աղաչանք-պաղատանք էլ կօնին։ Ուսում արած մարդը տէղն ու տեղը օսկի է։ Հիմիկուայ ժամանակը, վուր մտիկ իմ տալի, ախպէր, ու ինձ ու ինձ մէկ լաւ էլ փիքր իմ անում, տեսնում իմ, վուր ուսումի պէս թանկագին բան աշխըրքումը վունչինչ չկայ։ Տօ տարին տասներկու ամիս գեչեր ցերեկ աղի քըրտինք իս չափում, սուտ ու ղուրդ օրթում ուտում, հոգիդ սատաններու փայ շինում, ինչ է, ինչ է մէկ գրոչ-կապէկ պիտիս դազի։ Ուսում արած մարդու բանը ուրիշ է. նա վուր է, աղնիւ աղա է, խրա օթախում հանգարտ նստած ուրիշի գաղամբը թաքուրի նման սիրուն վայելում է։ Օխունվէ, օխունվէ էս ուսում մօգօնողը, լաւ բան է մօգօնի խա ու իմ Աստուծը։ Ախ թէ իմ հէրն ու մէրս ինձ էլ ուսում կու տէին, ինձ թաւուր խելօք հարուստ մարդ սաղ քաղքումը ով գիդենա մէկը չէր լսա ննգնի, էն վուխտը հարուստ Միրզօջէն մէրաւ զրազ չէր էկի ինձ հետ, համա ինչ անիմ, վուր ուսում չունիմ, թէլխս կտրած է։

— Ուսումից աւելի, ա մարդ, քու շօնթօլ վուրթին վունչինչ չէ պակաս։ Դուն էլ վուր ուսում էիր ունեցի, էն վոխտը ուսում արածներու գինը տասը մէկի արաս կուլէր։

—Վունց չէ, վունց չէ, ղուանցից մեթոմ փիս սուղենտ կուլէր մյուր։ Իժում, Նատալիա, դուն գիդիս ինչ կուլէիր։

—Քալօն էն վուխտը սուղենտկա կուլէր, աղա ջան, ընդմիջեց ծիծաղելով Նոր-Թխած ուսանողը։

— Տեսնում ես, քաջան, քեզ էն վուխտը սուղենտկա կու շինէր, ասաց աղա Գալուստը և վրայ ընդնելով ամուսնուն մի լաւ համբուրեց։

—Վոյ, քա, տուն քանդուած, ռադըրբիի, չես ամանչում, էրեխէքը մտիկ են տալի։ Պառւեց ես, մաղերդ սպիտել է ու քու ջհելութինը էլի չես թողնում։

—Ո՛ւմից պիտի ամանչիմ, էրեխէք խօ չին, վուր ամանչիմ, հիմի սուղենտ մարդիք են, Դրանք վուր կնիկ ուզին, իրանց կնիկներանց չալխտլին պաչ անին։

—Քու գլուխ չունինիմ քա, սարսաղ սարսաղ քէշ դուս տուր, թող մէ էրեխէկանց համար չայ շինիմ, Վանիչկա, Միխակ ջան նստոտեցէք գինացվալոս…

—Արա, մէ ինձ էլ ասիս, «նատի, Գալուստ, գենացվալոս» Նատալիկէն։ Էհ, փոյչ, աշխըրքի բանը գիտի, էնց է, գնա Գալուստ մէկ մէջ կողքէ, էսկնց աղերք աշխարքը բոր ու հիմի կի պատուիլէս, կօսէ, էլ բաներէկ չես, չարդաւակովում էր ամուսնու հետ հանաք անել աղա Գալուստը.

(Կը շարունակուի)

բունիս, վի գաւառն Երասխաձոր կոչի և Արշարունիք» *)

Այս կարճ բացատրութիւնից զատ պատմութեան մէջ այլ և չկայ կաղզուանի մասին յիշուած բան, բացի այն պատերազմները, որ տեղի են ունեցել ընդհանրապէս Հայաստանի մէջ և մասնաւորապէս Կաղզուանում։ Այսպէս մենք տեսնում ենք պատմութեան մէջ, որ «Շահամ որդի Վեաշայի ամիրմոմնոսի զօրաց գայ յերկիրս Հայոց աւերել և գերել զամենեսեան։ Եւ եկեալ յԱրշարունիս իջանէ եզերս Երասխայ ըստ հարաւոյ կուսէ ի տեղին, զոր այժմ կոչի Քառասունք։ Իսկ սպարապետն Հայոց Աբրաս յուսալով յԱստուած ելեալ ի կաղզուան աւանէ ԽԱ արամբք ամենայն Հայոց զօրուն քաջօք և մրցողօք։ Գայ Հասանէ ի վերայ նոցա զբոլոր բանակն ցեր ու ցան վայրացն ընկեցեալ սրախողխող և գետավէժ զամենեսեան առնելով։ Սակս որոյ յանուն տեղոյն ըստ թուոյ մանկանցն կոչեցաւ «Քառասունք»» **)

Այս խօսքերից պարզ երևում է, որ կաղզուանում եղել է զօրքերի բազմութիւն, այդտեղ է եղած նաև սպարապետ Աբրասը։

Բացի այս, պատմութեան մէջ յայտնի է նոյնպէս, որ երբ 897 թ. Սմբատ I թագաւորը պատերազմ ունէր Միջագետքի Ամէդ ոստիկանի հետ, Սմբատ իւր զօրքը յանձնեց Գագիկ Վասպուրական իշխանին, որպէս լաւ անգքերին և ճանապարհներին. Բայց տիրանենգ Գագիկը դաւաճանեց իւր թագաւորին... և Յուդայի պէս ծախեց Հայոց զօրքը և Ղարս ամրոցը։ Այս անգքը շատ ցաւ պատճառեց Սմբատ I թագաւորին, որը յուսալով Աստուծոյ ողորմութեանը «Ապաւինեալ Աստուած յանձն արար նմա զամենայն կամս իւր և զաշխարհն համօրէն։ Եւ ապա ելեալ անտի զի ձմեռ էր գնաց ամուրն Երասխաձորոյ յերկիրն յԱրշարունեաց աւանն կաղզուան և նստաւ անդ յամի Տեառն ՅԽԶ. 897» ***)

Երևում է, որ կաղզուանը հազար տարուց աւելի գոյութիւն ունի և իւր ժամանակին ունեցել է նաև ամրոց, այսինքն բերդ, ուր ապաստանում է Սմբատ I թագաւորը։

Ինչպէս Վանանդի Ղարս քաղաքը, նոյնպէս Արշարունեաց կաղզուան աւանը, զերծ չէ մնացել ներքին և արտաքին թշնամիներից. անդադար պատերազմ, աւարառութիւն, սուր և սրածութիւն անպակաս են եղել Արշարունեաց երկրից։

Այդպէս կաղզուանը ընկել է մոնղոլների, արաբների, հագարացիների, պարսիկների, յոյների և վերջապէս օսմանցիների ձեռքը 1517 թ.

1854 թ. յունիս 12-ին, գնդապետ Միքայէլ Տարիէլեան Լօռիս Մելիքեանն առանց պատերազմի վեր առաւ կաղզուանը, բայց երբ 1855-ին հաշտութիւն եղաւ ռուս-օսմանեան պատերազմին, դաշնագրի զօրութեամբ ինչպէս Ղարսը, նոյնպէս նրա սահմանակից կաղզուանը մնաց օսմանցիների ձեռքում. Վերջապէս 1877 յունիս 15-ին կաղզուանը կրկին ռուսաց ձեռն անցաւ և միացաւ Ռուսա-Հայաստանի հետ։

Ժ.

Կաղզուանի սահմանը.—Նրա դիրքը.—Հանքեր.—Ուխտատեղիներ.—Բնակիչներ.—Այգիներ.—Պարտէզներ.—Բնակիչների անտեսական դրութիւնը.—Պարապմունքը.—Վերջաբան.

Կաղզուանի սահմանն է. հիւսիսից՝ Արաքս գետը, արևմուտքից՝ Աղահանդը, հարաւից՝ Թիւրքա-Հայաստանի Պալանդէօկի լեռները, արևելքից՝ Ղազնղար, Ճաղին, Շէխ-Բայազէտ և Ղըզըլ-Քիլիսայ գիւղերը։ Դիրքն աւելի լեռնային է, քան դաշտային, այդ է պատճառը, որ օդը կաղզուանում շատ բարեխառն է։ Կաղզուանը չունի ոչ Ղարսի ցուրտը և ոչ Երևանի շոգերը։

Հանքերով շատ առատ է կաղզուանը։ Քաղաքից 10 վ. հեռաւորութեամբ գտնվում է աշխարհահռչակ աղահանքը, որից տարին ստացվում է մօտ 800,000 պուդ։ Կան նոյնպէս մարմարիոնի, ծծմբի հանքեր, առաջինը գտնվում է կաղզուանից—Կողբ տանող ճանապարհի վրայ Աղ.Ձայ գիւղի մօտ, իսկ միւսը, 20 վ. հեռու թիւրքաց սահմանագլխի մօտ. Թէ ծծումբը և թէ մարմարիոնը դեռ լաւ մշակուած չեն։ Կան նաև քարածուխի ընդարձակ հանքեր, բայց ոչ ոք դեռ ուշադրութիւն չէ դարձրել։

Կաղզուանի մօտ մի քանի ուխտատեղիներ կան, որոնք յայտնի են բոլոր Արշարունեաց, Վանանդ և Շիրակ գաւառներին։ Այդ ուխտատեղիների մասին գրում է նաև. Ստեփաննոս Ասողիկ Վառվառէ լոյսի մատուռը, որ ժողովուրդը «Վարդեայ հեր» է անուանում, այսինքն վարդեայ մազեր։ Տարուայ տօներին այդ մատուռները լիքն են լինում բազմաթիւ ուխտաւորներով։ Հետաքրքիր է, թէ որի օգտին է ծառայում այդ նշանաւոր արդիւնքը, բայց այս յայտնի է, որ կաղզուանի դպրոցներն այդ արդիւնքներից ոչ մի կոպէկ չեն ստանում։

Կաղզուանում կայ 600 տուն բնակիչ, թիւրք, հայ, յոյն։ Հայերը մեծամասնութիւն են կազմում։ Հայերը բաժանվում են երկու դասակարգի՝—բնիկների և նորեկների։ Բնիկները պարապում են այգեպանութեամբ, պարտիզպանութեամբ, իսկ նորեկները, որոնք գաղթականներ են Ղարսի, Ալէքսանդրապօլի կողմերից՝ պարապում են վաճառականութեամբ և արհեստով։ Նորեկ և բնիկ ժողովրդի մէջ կատարեալ համերաշխութիւն չկայ և բնիկները շատ խորթ աչքով են նայում նորեկներին։

Բնիկ կաղզուանցիները, ինչպէս ասացինք, պարապում են գլխաւորապէս այգեպանութեամբ։ Կաղզուանում բազմաթիւ են պտղատու ծառերը։ Այդ ծառերից առատ ստացվում է խնձոր, տանձ, ծիրան, դեղձ, սալոր, ընկոյզ և թութ. Հիանալի է մանաւանդ կաղզուանի թութը, որ գովաւած է բոլոր Արշարունեաց գաւառում։ Միրգը ծախվում է մեծ մասամբ Ալէքսանդրապօլում, Ղարսում և Արդահանում։

Գիւղական Հայերը պահում են բազմաթիւ անասուններ։ Այդ անասունները բեռներ են տեղափոխում մօտակայ քաղաքները, իսկ գործ չեղած միջոցին փայտ են կրում մօտակայ անտառներից։ Փայտը բաւական թանկ է կաղզուանում։

Կաղզուանում կայ երեք եկեղեցի և մի մզկիթ. Հայերը հիմնարկել են և շինում են մի մեծ հոյակապ եկեղեցի. Նորաշէն եկեղեցու պատերը երկու արշինաչափ բարձրացրած էին։ Միւս եկեղեցիներից մէկը յունաց է պատկանում, միւսը՝ ռուսաց։

Կաղզուանում կայ Հայոց երկսեռ դպրոցներ և մի ռուսաց «Нормальное Учил.» Այս դպրոցում ուսանում էին 80 մանուկներ։ Հայոց դպրոցները մեր այցելած ժամանակ փակ էին։

Կաղզուանում կայ հասարակաց այգի և վաճառականների ժողովարան (կլուբ)։ Այգին շատ փառաւոր է՝ դալարուր կաղնիներով շրջապատուած։

Արդէն սկսում են նոր փողոցներ բանալ լայն ու ընդարձակ. Նոր շինութիւններով քաղաքը սկսվում է հետզհետէ գեղեցկանալ։

Կաղզուանում մշտապէս բնակվում է 154-րդ Հետևակ Դերբենդեան գունդը։ Բացի այդ զօրքից կաղզուանում կայ չորս հարիւր կօզակ և 6 ժանդարմ մաքսային վարչութեան ծառայող պաշտօնեաներից։

Վերջաբան.

Մեր սոյն նկատողութիւններն ամենահամառօտ նկարագիրն էր մեր գաւառաբնակ հայերի կեանքի, որը մեր կարծիքով աւելորդ մի բան չպիտի համարուի, քանի որ եթէ մի ժողովրդի առաջադիմութիւնը փափագելի է, նոյնքան փափագելի և կարեւոր է այդ ժողովրդի կեանքի ուսումնասիրութիւնը։

Գաւառական կեանքի մէջ կան շատ հետաքրքիր և ուշադրութեան արժանի բաներ, այդ պատճառով նրանց ուսումնասիրելը կարող է օգտաւէտ լինել։

Գալով այն տպաւորութեանը, որ մեր վրայ թողեց մեր ուղևորութիւնը, այսքանը միայն կասենք, որ գաւառաբնակ ժողովրդի մէջ դեռ պահուած կան շատ ազնիւ և նահապետական սովորութիւններ, որոնք դժբաղդաբար շատ տեղերից վերցուել և մոռացուել են. Քրիստոնէական պարտ ու պատշաճ եռանդը, մարդկային բարոյականութիւնը, մեծին յարգանք և մեծարանք ցոյց տալը, հիւրասիրութիւն, առաքինութիւն, բարեպաշտութիւն գաւառներում աւելի շատ կայ, քան թէ այն դիմակաւոր անձերի մէջ, որոնք յայտնի են «ինտելլիգենտ» անունով։

Գաւառաբնակ շինական ազգայինները աւելի խորհուն կերպով են ըմբռնում քարոզուած մտքերը։ Ուսման սէրը նրանց մէջ օր աւուր աճում է և զարգանում։ Որդիներին ուսուցանելն ու դաստիարակելը գաւառաբնակ ժողովրդի ամենամեծ փափագն է։

Գաւառացի ժողովուրդը մեծ նշանակութիւն է տալիս նաև տպագրական խօսքին։ Մամուլի յայտնած մտքերը գաւառներում մեծ համակրութեամբ են ընդունվում։

Հոգևորականութիւնը գաւառներում վայելում է արժանավայել յարգանք։ Քահանան ընդունվում է որպէս Քրիստոսի փոխանորդ, որպէս Աստուծոյ Տաճարի պաշտօնեայ, որպէս հովիւ Քրիստոսի բանաւոր հօտի։

Բայց կան նաև տխուր երևոյթներ, որ շնորհիւ տգիտութեան խոր արմատներ են ձգել գաւառաբնակ ազգայինների մէջ։ Այսպէս օրինակ, գըլխագին տալը (բաշլուղ), մեռելահաց (քէլէխ), հակառողջական սովորութիւնները, առանձին արհեստների բացակայութիւնը, հակատնտեսական սովորութիւններն և այն ամէն անմիտ և անխորհուրդ չուայտութիւնները, որ խեղճութեան և չքաւորութեան են մատնում շինական ժողովրդին։

Շիրակեցի.

---

*) Չամչեան, Պատմ. Հայոց գիրք Գ. երես 156.

**) Ասողիկ գիրք Բ. գլուխ Բ.

***) Յովհաննէս կաթողիկոս. Ասողիկ գիրք Գ., գլուխ Գ. Չամչեան Պատմութիւն Հայոց գիրք Դ. գլ. Բ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՄՈՒՍՍԱՎԱՑԻ ԽՆԴԻՐԸ.—Իտալիայի արտաքին գործերի մինիստր Կրիսպին պատասխանել է Ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Գօբլէի ծանուցագրին, որ վերաբերում էր Մուսսավայի խնդրին։ Կրիսպիի ծանուցագիրը, ինչպէս նկատում է վիեննայի «Neues Tageblatt»ը, նման է համալսարանական դասախօսութեան՝ միջազգային իրաւունքների վերաբերմամբ։ Այդ ծանուցագրի մէջ Կրիսպին արծարծում է «res nullius»-ի, այսինքն անտէր երկրի գաղափարը, որով մէկի [illegible] է տէր դառնալ անտէր երկրին։ Իտալական մինիստրի ծանուցագիրը միևնոյն ժամանակ առատ է և Ֆրանսիայի դէմ ուղղուած վիրաւորանքներով։ Կրիսպիի կարծիքով Ֆրանսիային չէ վերաբերում այն խնդիրը, թէ ով է տիրում Մուսսավային։ Մուսսավայի խնդրում Ֆրանսիայի խառնուելը Իտալիան բացատրում է իրենց արգելք դնելու նպատակով։

Նոյն լրագիրը նկատում է, որ չնայելով իտալական մինիստր-նախագահ Կրիսպիի ծանուցագրի սուր լեզուին, ծանր հետևանքներ կարող չէ ունենալ։ Պ. Կրիսպին գիտէ, որ Ֆրանսիան Մուսսավայի պատճառով պատերազմ չի յայտնիլ։ Իտալիան յենում է զօրաւոր դաշնակիցների վրայ։

— «National Zeitung»-ի Պարիզի թղթակիցն այդ առթիւ ասում է. «Շատ անախորժ տպաւորութիւն գործեց այստեղ Կրիսպիի ծանուցագիրը։ Ֆրանսիական բոլոր մամուլն էլ այդ ծանուցագիրը չափազանց յարձակողական և գրգռեցուցիչ է համարում։ Այստեղ կարծում են, որ պ. Կրիսպին նպատակ ունի Ֆրանսիային գրգռելու։ Այդ պատճառով բոլորն էլ գովում են Գօբլէի մտադրութիւնը Կրիսպիին պատասխանելու, թէ Ֆրանսիական կառավարութիւնը իւր պարտականութիւնը կատարած վերջացրած է համարում և թողնում է Իտալիային հոգալ այդ մասին, որպէս այդ գործում անմիջական շահ ունեցող պետութիւն»։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ.—Կ. Պօլսից թերթերին հեռագրում են, թէ Մակեդոնիայի թուրքերը մեծ-եպարքոսին դիմել են գանգատելով, որ քանի գնում Մակեդոնիայում աւելանում է բուլղարական պրօպագանդա։

—Սերբիայի Միլան թագաւորը, ինչպէս հաղորդում են լրագիրները, կատարեալ ազատութիւն է տուել իւր որդուն՝ պրինց Ալէքսանդրին։ Նա իւր որդու հետ յաճախում է զբօսաճռութեան զանազան տեղեր, և ոչ մի բանի մէջ չէ արտայայտում իւր ծնողական հեղինակութիւնը՝ բացի նախկին թագուհու վերաբերմամբ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Օտարոտի սպանութիւն.— Աւստրիական լրագիրներից մինում պատմուած է. «Համարեա թէ մեր թերթի հրատարակիչը զանազան թագուցեալ-քանքար հնարագէտներից նամակներ է ստանում, որոնք խնդրում են փող՝ իրենց արած գիւտերը գլուխ բերելու համար, որոնք գլխաւորապէս լինում են օդապարիկներ և թռչելու ուրիշ գործիքներ։ Դրանցից շատերը իրենց նամակների վերջում ուղղակի սպառնալիքներ են անում, որ անձնասպանութիւն կը գործեն՝ եթէ իրենց ցանկացած փողը չստանան։ Բայց այդ բոլորը ոչինչ է համեմատելով մի ստորին կարգի ծառայողի սպառնալիքի հետ, որ դիմել է որոշեալ գումար խնդրելով իւր հնարած օդապարիկի համար։ Այդ պարոնը գրում է. «Ինձ 120 Ֆիօրին է հարկաւոր միայն, եթէ իմ գիւտը կը գործադրուի կեանքի մէջ, ի հարկէ, ձեզ [illegible] երախտապարտ կը լինեմ, իսկ եթէ դուք մերժէք իմ խնդիրս, այն ժամանակ ստիպուած կը լինեմ... ամուսնանալ, որովհետև միայն այդ միջոցով կարող կը լինեմ իրականացնել իմ միտքը»։

Զարմանալի սպառնալիք։

Լուսանկարի օգուտը.— Անցեալ ձմեռ, Բրիւսսէլում պրինց Կրօայի և պրինցէսս Արէնբէրգի ամուսնութեան միջոցին մեծ անկարգութիւններ էին ծագել։ Կառավարութեան կարգադրութեամբ թէև խիստ քննութիւն էր նշանակուած, բայց անկարգութեան անողների թիւն այնքան շատ էր, որ հնար չեղաւ գլխաւոր խռովարարներին գտնելու։ Սակայն այժմ արդէն խռովարարների մեծ մասը յայտնուեցաւ և դատի է կանչուած շնորհիւ գաղտնի լուսանկար մեքենայի, որ խռովութեան միջոցին գործադրելով կառավարութեան կարգադրութեամբ, ակամայ նկարուած էին։

⁂

Գերավաճառ.— Մարօկկօյում հրատարակուող «Times of Marocco» թերթի ասելով, գերավաճառը մինչև օրս գոյութիւն ունի Մարօկկօյում, որը նկատվում է նոյն իսկ ծովեզերեայ քաղաքներում։ Անցեալ ամսուայ վերջում Մօգադօր է գալիս մի մարդ՝ իւր հետ ունենալով չորս գերուհիներ։ Նրանից մինին նա պահում է իւր տանը, իսկ միւս երեքին վաճառք է հանում՝ քաղաքում ման ածելով նրանց և բարձրաձայն գովելով իւր ապրանքը։ Մի գնող մօտենում է թշուառ գերուհիներին, որ տասնհինգամեայ մի աղջիկ էր, բռնում է բերանը և մանր տալիս ատամներին, բայց առանց գնելու հեռանում է, որովհետև գերուհու ատամներն իւր ուզած սպիտակութիւնը չեն ունենում։ Սակայն նրանցից մինին, մի քանի ժամ յետոյ գնում է տեղական կադին։ Մնացած երկուսին ծախել հնար չէ լինում։ Թշուառ գերուհիների գինը տատանվում է 3-ից 5 Ֆունտ ստէռլինգի մէջ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԲԵՐԼԻՆ, 17 օգոստոսի.—«Կայսերական յայտարարութեան» մէջ յայտարարուած է Բէնինգսէնին Հաննօվէրի նահանգի օբեր-նախագահ նշանակուելու մասին։

ՊԱՐԻԶ.—Երկուշաբթի երեկոյեան գեներալ Բուլանժէն ուղևորեցաւ Շվեդիա, ուր կը մնայ մինչև ամսի վերջը։

ՀՌՈՄ.—Վիլհէլմ կայսրը պապին նամակ գրեց, որի մէջ իւր Հռոմ գնալը բացատրում է պապին վատիկանում շնորհաւորելու ցանկութեամբ։ Այդ ուղևորութեան մանրամասնութիւնները խիստ գաղտնի են պահվում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 օգոստոսի.—«Гражданинъ»-ը հաղորդում է, որ շուտով կքննուի տղամարդկանց և կանանց իրաւունքը ժառանգութեան մասին հաւասարելու մասին։

Զինուորական մինիստրը ուղևորում է Ելիսավետպոլ օգոստոսի 25-ի զօրախաղերին։

ՄԻՒՆԽԷՆ.—Աւստրիական կայսրը վաղը Տեգերնզէից կուղևորի Գմունդէն, իսկ աւստրիական կայսրուհին նոյնտեղ կուղևորի ուրբաթ առաւօտեան։

Խմբագիր-Հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՕՍՏԱՅԻՆ ԿԱՌՔԵՐԻ

երթևեկութիւնը պատերազմական-վիրական ճանապարհով

1888 Թ. մայիսի 15-ից մինչև նոյեմբերի 15-ը.

Թիֆլիսից դուրս է գալիս

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը առաւօտեան ժամը 9-ին, Մլեթի կայարանում գիշերելով հասնում է Վլադիկավկազ միւս օրը երեկոյեան ժամը 8-ին։

Նոյնպէս դուրս է գալիս առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Փասանաուր կայարանում և Վլադիկավկազ հասնելով միւս օրը ցերեկուայ ժամը 5-ին։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսը դուրս է գալիս ցերեկուայ ժամը 4-ին, առանց գիշերելու, միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Վլադիկավկազ։

Նոյնպէս դուրս է գալիս ճաշից յետոյ ժամը 5-ին և յառանց ճանապարհին գիշերելու Վլադիկավկազ հասնում է միւս օրը ժամը 8-ին երեկոյեան։

Վլադիկավկազից

Հինգ հոգու տեղ ունեցող կառքերը դուրս են գալիս առաւօտ. ժամը 9-ին, գիշերում են Մլեթի կայարանում և միւս օրը երեկոյեան ժամը 8-ին հասնում են Թիֆլիս։

Նոյնպէս առաւօտեան ժամը 7-ին դուրս են գալիս և գիշերելով Փասանաուր կայարանում, միւս օրը ժամը 6-ին երեկոյեան հասնում են Թիֆլիս։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսները դուրս են գալիս ցերեկը, ժամը 4-ին ճաշից յետոյ, առանց գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 9-ին հասնում են Թիֆլիս։

Նոյնպէս դուրս են գալիս երեկոյեան ժամը 5-ին և առանց ճանապարհին գիշերելու, միւս օրը հասնում են Թիֆլիս երեկոյեան ժամը 9-ից 50 ր. անց.

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Շոգենաւային երթևեկութիւն Բաթումի Օդեսայի և Կ. Պոլսի մէջ։

Բաթումից գնում է

Երեքշաբթիները.— Կէս օրից յետոյ ժամը 4-ին, ուղիղ գծով, մտնում է Սուխումի և Նովոռոսսիյսկի նաւահանգիստները։

Հինգշաբթիները.— Կէս օրուայ ժամը 4-ին, ուղիղ գծով, Նովոռոսսիյսկի և Կերչի վրայով։

Շաբաթ օրերը.— Երեկոյեան 8 ժամերին, շրջանառու ընթացքով, բոլոր նաւահանգիստները այցելելով։

Երկուշաբթիները.— Երեկոյեան արտասահմանեան գնացքով Կ. Պոլիս։

Բաթում գալիս է

Երկուշաբթի — Առաւօտը, Օդեսայից, ուղիղ գծով Կերչի և Սուխումի վրայով։

Չորեքշաբթի — Առաւօտը Օդեսայից, ուղիղ գծով, Կերչի և Նովոռոսսիյսկի վրայով։

Ուրբաթ.— Երեկոյեան, Օդեսայից, շրջանառու ընթացքով։

Կիրակի օրերը.— Առաւօտը Կ. Պոլսից։

Փօթիից գնում է Բաթում

Երեքշաբթիները.— Առաւօտեան ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան ուղղակի շոգենաւին միանալու, որ մտնում է և Սուխում։

Ուրբաթ — երեկոյեան կամ գիշերը, շրջանառու Ղրիմ-Կովկասեան Բաթում գնալու նաւահանգիստ գալուց յետոյ։

Շաբաթ օրերը.— Առ. ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան և Ռումէլիա-Անատոլեան շրջանառու շոգենաւերին միանալու։

Բաթումից գնում է Փօթի

Չորեքշաբթի և կիրակի օրերը.— Նաւը այնպէս գնալու ժամը որոշում է Բաթումի նաւային գործակալութիւնը՝ նաւը Փօթիից գալուց յետոյ։

Բացի այդ, ամեն շաբաթ Օդեսայից Ղրիմ-Կովկասեան նաւահանգիստներից գալիս են Փօթի որոշեալ ժամանակներում երթևեկող ապրանքակիր-մարդակիր նաւեր չորեքշաբթի օրերը, լուսաբացին, և գնում են ուրբաթ առաւօտները՝ Նիկոլաևի վրայ Օդեսայի վրայով շաբաթ օրերը երեկոյեան Սեվաստոպօլ և Բաթում գալիս են նոյնպիսի նաւեր, որոնք Փօթի գալիս են ուրբաթ լուսաբացին և հեռանում է շաբաթ օրը երեկոյեան, վերադառնում է առանց Բաթում մտնելու Սեվաստոպօլի և Օդեսայի վրայով գալիս է չորեքշաբթի երեկոյեան։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Երթևեկութիւն «Թիֆլիս» կայարանում

Գնում է

Բաթում, պօստային.	8 ժ. 49 վ. առ.
Բագու, »	10 ժ. 46 վ. եր.
Սուրամ, ապ. մար. գն.	3 ժ. 21 վ. ց.
Աղստաֆա, խառն գն.	8 ժ. 20 վ. առ.

Գալիս է

Բաթումից, պօստ.	10 ժ. 15 վ. եր.
Բագուից, »	8 ժ. 6 վ. առ.
Սուրամից, ապ. մարդ.	8 ժ. 24 վ. առ.
Աղստաֆայից, խ. գն.	8 ժ. 18 վ. եր.

Ցանկանում եմ դասեր ունենալ հայ դպրոցներում Հայոց լեզուից և այդ լեզուով դասախօսուող առարկաներից, շաբաթական 24—26 դասով. պայմանների մասին թող դիմեն «Նոր-Դար»-ի խմբագրատուն։ Աւարտել եմ Ներսիսեան դպրոցը և վարել եմ հայ ուսումնարաններում Հայոց լեզուի ուսուցչութեան պաշտօն։

3—3

ՀԱՐԿԱՒՈՐ Է ռուսաց լեզուի ուսուցիչ. Հասցէն և պայմանների մասին շուտով յայտնել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։

Խոնարհաբար խնդրում եմ այն յարգելի անձերին, որոնք բարեհաճել էին իմ թարգմանած՝— պրոֆէսսոր Ս. Գաբրիէլի

„ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ"

գրքի համար բաժանորդներ գտնելու նեղութիւնը յանձն առնել, բարեհաճին ուղարկել բաժանորդաթերթը և դրամը, որպէս զի կարողանամ ճշդիւ որոշել տպագրելի օրինակների քանակութիւնը և ժամանակին զետեղել յարգելի բաժանորդաց ազգանունները։ Գիրքը լոյս կը տեսնի առաջիկայ սեպտեմբերին։

Գինն է 1 րուբլի։

Հասցէն՝ Тифлисъ. Учителю Арм. Дух. Семинаріи Нерсесянъ, Григорію Шахъ-Будагянцу.

5—3

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ տասը տարի պարապել է ուսուցչութեամբ ռուսաց և թէ հայոց ուսումնարաններում և որն ունի ուսուցչական իրաւունք, ցանկանում է դասեր ունենալ Հայոց եկեղեցական դպրոցներում ռուսաց լեզուից, թուաբանութիւնից, գծագրութիւնից և ռուս. վայելչագրութիւնից՝ մինչև 24 դաս շաբաթական։ Ցանկացողները կարող են դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։

5—1

SANTAL DE MIDY

Pharmacien de 1-re classe, à PARIS
permis en Russie

ՍԱՆՏԱԼ ԴԸ-ՄԻԴԻ

Պարիզի առաջնակարգ դեղագործ Գ. Միւիէի Ռուսաստանում ընդունուած.

Ծախվում է Պարիզ, Վիվիէն փողոց № 8 և գլխաւոր դեղավաճառների մօտ։

(M.) Ե. 30—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Սամուէլ Սմայլս

ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Գերման. թարգմ.

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Գինն է 1 ր. 50 կ.

Նոյն թարգմանչի

Շմիտթ, Բենիամին Ֆրանկլին, 2 տիպ . . . 40 կ.
— Գէորգ Վաշինգտոն 2 տիպ . . . 60 »
— Հոմերի Իլիականը, պատկերազարդ . 1 ր. 20 »
— Հոմերի Ոդիսականը, պատկերազարդ 1 ր. 50 »

(Ճանապարհի ծախքը թարգմանչի վրայ է)։

Վաճառվում են թարգմանչի մօտ՝ Тифлисъ, Садовая, Маріино-Авановское училище.

ПАРФЮМЕРІЯ
ВЫСШАГО КАЧЕСТВА
А. СІУ и Ко
МОСКВА
НАХОДИТСЯ ВО ВСѢХЪ
ГОРОДАХЪ РОССІИ.

(М. 50—12

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Ուղիղ և կանոնաւոր երթևեկութիւն Մարսէլլի և Բաթումի մէջ։

Հինգշաբթի, սեպտեմբերի 1-ին, «ԱՆԱՏՕԼԻԱ» (Anatolie) շոգենաւը, նաւապետ «ԲՕՇԷԼ» (Boschel) դուրս կը գայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյլ։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալութեան Բաթումում՝ պ. ԳԱՐԱՆԻՕՆԻՆ, Թիֆլիսում՝ պ. ՐԷՆՕԻՆ, նախկին գալերէյա Արծրունիների № 103.

3—1

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

ԲԱԳՐԱՏ ՄԻՐԻՄԱՆԵԱՆՑԻ

ՏԵՂԱՓՈԽՈՒԵՑԱՒ ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ՝ Սոլօլաքի փողոց, տ. № 38.

Գիշերօթիկների, կիսագիշերօթիկների և երթևեկների քննութիւններն և ընդունելութիւնը կսկսուին օգոստոսի 20-ից, իսկ ուսումը կ'սկսուի սեպտեմբերի 1-ից։

6—2

Խրիմեկեանի Գրավաճառանոցում ծախվում է Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձական խորհրդից թոյլտուութիւն ստացած Ամիրաղեանցի և Տէր-Գաբրիէլեանցի կազմած «Новая Книжка для обученія русскому языку въ армянскихъ начальныхъ школахъ, г. I и II» դասագրքերը։

3—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ՋՐՈՅՑՆԵՐ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Ա. մաս։ Ս. Փիլոյեանցի

գինն է 40 կոպէկ. կարելի է ստանալ հետևեալ հասցէով. Ново-Баязетъ. Учителю Саркису Пилоянцъ.

5—2

ՌՈՒԲԷՆ ՄԻՍԱՔ ԵՐԱՄԵԱՆՑ

ՍԱԼԻՆԱՆԻՑ ԷՋՄԻԱԾԻՆ

Նկարագիր

ՌՈՒՍՏԱՒՈՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ

Բաղկացեալ փոփոխութիւններով

Գինն է 50 կոպէկ

Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։ (Ա.) Ժ—30

№ 7.

КЕЛЛЕРАН ԻՐԱՇ ԵՒ ՓՈՇՈՒ

ԳՈՐԾԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻԱՅՆ

Ցնայլն ամեն տեսակ պղնձէ ամաններ (ինչպէս օրինակ հեշտանը, թանալներ և այլն) մաքրելու համար, բառի բուն նշանակութեամբ փառաւոր և անհամեմատ փայլանց հետևանքներն է հասցնում, քան մնացած բոլոր միւս միջոցները։

Վաճառվում է գաւառներում բոլոր փոքր և շատ նշանաւոր աւետարաններում մօտ, իսկ Մոսկվայում

է Ր. ԿԵՕԼԼԵՐ և ընկ. մօտ, Նիկօլսկայա փողոցի վրայ

(M 46, 218) 3—2

ՋԻՅԹՈՒՆՑԻՆԵՐԻ ՕԳՏԻՆ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

„ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ"

Դաշնամուրի համար

1) Vivace
2) Հայոց եղանակ.
3) Բաշիբուզուկի եղանակ.
4) Յարձակումն.
5) Հայոց եղանակ.
6) Թիֆլիսի զուռնա.
7) Քրդի եղանակ.
8) Նախիջևանի ջրկիրների եղանակ
9) Իջաս պարսկական.
10) Պարսկական եղանակ.
11) Մոլդավական պար.

Գինն է 1 րուբլի։ Ճանապարհածախսի համար պէտք է վճարել 11 կոպէկ մարկայով։

Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան, Թիֆլիսում։

ВОСТОЧНЫЕ МОТИВЫ
для фортепіано

MOTIFS ORIENTEAUX
Pour le Piano

1) Vivace
2) Армянскій мотивъ.
3) Башибузукскій мотивъ
4) Нападеніе.
5) Армянскій мотивъ.
6) Тифлисская зурна.
7) Курдинскій мотивъ.
8) Мотивъ Нахичеванск. водовозовъ.
9) Иджасъ, Персидскій мотивъ.
10) Персидскій мотивъ.
11) Молдавскій танецъ.

Цѣна 1 руб. и 11 к. (марками).

Можно получать въ ред. «Норъ-Даръ», въ Тифлисѣ.

(Խմ.) X—49

Дозволено цензурою. Тифлисъ, 18 го Августа 1888 г. Տպարան Կովկաս լրագրի գրասենեակի։ Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читахова